

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԻԻ ԽՕՍՔԸ

«Ցնծայ այսօր Մայրս մեր Սուրբ Եկեղեցի:»

Ուրախացող այսօր սուրբ Եկեղեցին է. մեր մայրը, որ Սուրբ Ասազանին մկրտութեամբ ծնունդ կու տայ իր զաւակներուն:

Եւ Սուրբ Միւռոնի օծութեամբ, Սուրբ Հոգիին շնորհներովը կը շնորհագարդէ եւ կը զօրացնէ, Քրիստոսի հաւատքի ժայռին վրայ ամուր կանգնած, եւ Անոր Աւետարանի պատգամին եւ ճշմարտութեան ինքզինքն հաւատաւոր սպասաւորը նկատող, եւ հաւատարիմ գիւնդըրը յայտարարող՝ անհատը եւ հաւաքականութիւնը, ազգը եւ մարդկութիւնը:

Այսօր՝ ուրախացողը Հայց. Առաքելական Եկեղեցին է, հոգեւոր մայրը հայ ժողովուրդին, որովհետեւ իր զաւակներէն մէկը, օծումը ստացաւ Սուրբ Հոգիին, ապրելու, գործելու, եւ սպասաւորելու համար իրրեւ Մայրագոյն-Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Պատասխանատուութիւնը ծանր է, մարդկային ընկերութեան մէջ չարին սադրանքները այլազան են, եւ հաւատքի խաչը կրելու ճանապարհը փշոտ է եւ խաբարուտ:

Ճիշտ այդ պատճառով, աղօթեցիմք, եւ պէտք է միշտ աղօթենք, որ Ամենայն Հայոց օծեալ Հայրապետը, անասան մնայ իր ուխտին մէջ, հաստատակամ ընթանալով իրրեւ հաւատարիմ ժառանգորդը Թաղէոսի եւ Բարթողիմէոսի Սրբազան Առաքելոցն, եւ առաքելաշաւիղ յաջորդը Հայաստան աշխարհի Երկրորդ Լուսաւորչին, Սրբոյն Գրիգորի Հայրապետին: Աղօթենք մանաւանդ որպէս զի, շնորհարարշիւ Սուրբ Հոգին լուսաւորէ ճանապարհը նորածն Ամենայն Հայոց Հայրապետին, պարգեւելով եւ առատացնելով անոր մէջ Հոգի իմաստութեան եւ հանճարոյ, հոգի գիտութեան եւ խորհրդոյ, հոգի աստուածային երկիւղի, ճշմարտութեան եւ աստուածապաշտութեան:

Վեհափառ Հայրապետ, ընդունեցէ՛ք սրտի մաղթանքը մեր հաւատաւոր ժողովուրդին որ «Լուսաւորչի հովուապետական Գաւազանը ձեր ձեռքին մէջ ծաղկեալ մնայ միշտ», աղօթելով նաեւ. «Տէր անասան պահիր դու միշտ, Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Կ. ՊՈԼՍՈՅ ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐԻԻ ԽՕՍՔԸ

Որպէս Կոստանդնուպոլսոյ Պատրիարք, մենք եւս մեր կարգին կու գանք բաժնելու. կիսելու ուրախութիւնը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ բովանդակ զաւակներուն, երբ անգամ մը եւս սգոյ շղարշը կը վերցուի Ս. Լուսաւորչի Աթոռին վրայէն եւ մենք կ'ունենանք նորընտիր գահակալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ: Բոլոր նուիրապետական Աթոռները ծառայութեան արժողներ են եւ յատկապէս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ գահակալել կը ճշմանկէ սպասաւորը դառնալ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ բոլոր սպասաւորներուն: Եւ երբ երրորդ հազարամեակը կը բացուի մեր ժողովուրդին առջեւ, այնքան կենսական է իւրաքանչիւրիս համար, յատկապէս Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներուն վրայ բազմածններուն համար, որպէս զի առաքելոց եւ մարգարէիք հիման վրայ հաստատուած մեր Սուրբ Եկեղեցին նոր հոգւով եւ նոր եռանդով նայի դէպի ապագայ եւ հոգեւոր սնունդ բաշխէ, ջամբէ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Այս զգացումներով մենք կը մաղթենք իմաստութիւն, եռանդ եւ կորով նորընտիր Հայրապետին եւ քաջագործութիւն, որպէս զի ինքը կարողանայ կատարել, կենսնի կոչել այն ուխտը, որ բիշ առաջ ինքը կատարեց առաջի Աստուծոյ եւ առաջի Սուրբ Սեղանոյն: